ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
12	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	Երախտագիտության մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, հաստությունը՝ 2,5 մմ, կենտրոնում՝ փայլեցված ֆոնին, հավերժությունը խորհրդանշող պատկեր է: Սկավառակի արտաքին տրամագծին զուգահեռ պատկերված է ցորենի հասկ, վերևում կա կորաձև մակագրություն՝ «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»: Սկավառակը պատրաստված է

						պղնձի հատուկ համաձուլվածքից (20,0 գր) և արտադրված է դրոշմման եղանակով: Այն անցնում է հատուկ մշակում և պատված է 999 հարգի ոսկով: Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության ոսկեգույն՝ եզրագծերում շագանակագույն զոլակներով մետաքսե ժապավենով: Ժապավենի մի ծայրում՝ վերից վար, անցնում է 3 կարմիր շերտագիծ: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունը 39 մմ է: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է: Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է: Մեդալի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենն ունի մեդալի ժապավենային գունային նկարագիրը: Մեդալները պետք է համապատասխանեն «Պետական պարգևների և պատվավոր

					կոչումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նկարագրություններին և նմուշներին, լինեն մաքուր, առանց քերծվածքների կամ այլ հետքերի, դարձերեսի կողմից համարակալված (հերթական համարները կտրամադրվի) և փաթեթավորված: Միատեսակ մեդալները չպետք է տարբերվեն միմյանցից (չափերի տարբերությունը՝ ոչ ավել քան 0.1 մմ): Վերը նշված քաշերի թույլատրելի շեղումը՝ +/- 2%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
12					